Հավելված N
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26-ի N 636Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) խաղային գործի վարչության (այսուհետ՝ Վարչություն) Խաղային գործունեության քաղաքականության և մեթոդաբանության բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիրը՝ 23-32.27-Ղ4-2):

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Մ.Մկրտչյան 5

- **Պաշտոնի բնութագիրը**
  - **Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

1. ապահովում է վիճակախաղերի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակման և կատարելագործման հետ կապված աշխատանքների իրականացումը.
2. ապահովում է շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակման և կատարելագործման հետ կապված աշխատանքների իրականացումը.
3. ապահովում է այլ երկրներում խաղային բնագավառը կարգավորող պետական մարմինների հետ համագործակցության կազմակերպումը.
4. ապահովում է խաղային բնագավառում նոր գործիքների և տեխնոլոգիաների ուսումնասիրության ու ներդրման աշխատանքների իրականացումը.

5. ապահովում է վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատան գործունեություն իրականացնող կազմակերպությունների և պետական կառավարման մարմինների հետ գործնական կապերի հաստատման աշխատանքների իրականացումը.
6. ապահովում է օտարերկրյա պետություններում, Եվրոպական Միության և Եվրասիական Տնտեսական Միության անդամ երկրներում խաղային բնագավառում գործող համաձայնագրերին և ասոցիացիաներին անդամակցությանն ուղղված աշխատանքների իրականացումը.
7. ապահովում է Նախարարությանը վերապահված խաղային գործի բնագավառում լիցենզավորման գործընթացի իրականացման հետ կապված հարաբերությունների քաղաքականության մշակման և կատարելագործման աշխատանքների իրականացումը.
8. ապահովում է համակարգային զարգացման հիմնական միտումների և հիմնախնդիրների ամփոփ վերլուծության՝ այդ թվում համակարգային հիմնախնդիրների բացահայտման, վերջիններիս վերացման, ինչպես նաև համակարգի զարգացմանը խթանող առաջարկությունների և միջոցառումների մշակման աշխատանքների իրականացումը.
9. ապահովում է օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի վերաբերյալ ստացված տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և ուսումնասիրության աշխատանքների իրականացումը.
10. ապահովում է օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման արգելափակման ենթակա կայքերը բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի նիստերի նախապատրաստման, կազմակերպման, դրանից և հանձնաժողովի եզրակացություններից բխող գործառույթների իրականացման, հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա ընդունված որոշումների և հաստատված ցանկերի հրապարակման աշխատանքների իրականացումը:

- **Իրավունքները**
- համապատասխան մարմիններից ստանալ մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ, անհրաժեշտ հիմնավորումներ, փաստաթղթեր.
- տարբեր աղբյուրներից ստանալ խաղային բնագավառին առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն.
- խաղային բնագավառին առնչվող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման համար համապատասխան մարմիններից, պաշտոնատար անձանցից սահմանված կարգով պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.
- խաղային բնագավառին առնչվող գիտելիքների բարձրացմանն համար կազմակերպել և/կամ մասնակցել համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների մասնակցությամբ խորհրդակցություններին.

- այլ պետությունների խաղային բնագավառին առնչվող գործառույթները կարգավորող և իրականացնող կազմակերպությունների ու պետական կառավարման մարմինների հետ գործնական կապեր հաստատելու համար ներկայացնել առաջարկություններ:

- **Պարտականությունները**

- ամփոփել ոլորտը կարգավորող իրավական ակտերը, ներկայացնել դիրքորոշում և առաջարկություններ Վարչության պետին.
- ամփոփել Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերը, եզրակացությունները, ինչպես նաև մեթոդական պարզաբանումներ.
- օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրավական ակտերի նախագծերը ներկայացնել հանրային քննարկման և հետևել ներկայացված իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումներին և վերլուծել արդյունքները.
- օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրավական ակտերի նախագծերը ներկայացնել համապատասխան մարմիններ կարգավորման ազդեցության գնահատման համար.
- իրավական ակտերի նախագծերը ներկայացնել պետական-իրավական փորձաքննության՝ վարչության պետի հետ քննարկման արդյունքում.
- ամփոփել միջազգային պրակտիկայում գոյություն ունեցող ոլորտը կարգավորող իրավական ակտերի ուսումնասիրության արդյունքները և ներկայացված համապատասխան մասնագիտական առաջարկությունները.
- հետևել շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների և վիճակախաղերի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակման և կատարելագործման, ինչպես նաև խաղային բնագավառում նոր գործիքների և տեխնոլոգիաների ուսումնասիրության ու ներդրման աշխատանքների իրականացմանը.
- ամփոփել այլ մարմինների կողմից մշակված իրավական ակտերի վերաբերյալ Վարչության աշխատակիցների ներկայացված դիրքորոշումները և ներկայացնել Վարչության պետին.
- հավաքագրել համակարգային զարգացման հիմնական միտումների և հիմնախնդիրները և ներկայացնել ամփոփ վերլուծությունները՝ այդ թվում համակարգային հիմնախնդիրների բացահայտման, վերջիններիս վերացման վերաբերյալ.
- ներկայացնել համակարգի զարգացմանը խթանող առաջարկություններ և իրականացման համար անհրաժեշտ միջոցառումներ.
- վերլուծել օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի վերաբերյալ ստացված տեղեկատվությունը.

- կազմակերպել օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման արգելափակման ենթակա կայքերը բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքները և հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա ընդունված որոշումների և հաստատված ցանկերի հրապարակման աշխատանքները:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության կամ ֆինանսավարկային կամ իրավունքի կամ լիցենզավորման ենթակա գործունեության բնագավառներում չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ

1) Աշխատակազմի կառավարում
2) Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3) Որոշումների կայացում
4) Ծրագրերի կառավարում
5) Խնդրի լուծում
6) Բարեվարքություն.

Ընտրանքային կոմպետենցիաներ

1) Բանակցությունների վարում
2) Կոնֆլիկտների կառավարում
3) Ծառայությունների մատուցում
4) Բողոքների բավարարում
5) Ժամանակի կառավարում
6) Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
7) Փաստաթղթերի նախապատրաստում:

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: